Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ Ա Ր Ա Ն Ի
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ Ի
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
АДМИНИСТРАЦИИ
А Р М А В И Р С К О Г О
МАРЗПЕТАРАНА

0901 Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.2 42 62
Ֆաքս /0237/ 2 - 42 - 62

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 6 – 42 -62
Факс. 010/ 28-06-46

‘--------’---------------------- 2017թ. N-----------
Ձեր 20 թ. -------------------------- N -----------

*«Հրապարակ» օրաթերթի լրագրող Ա. Պապիկյանին*

*Հարգելի Աննա Պապիկյան*

Ի պատասխան Ձեր՝ 25.05.2017 թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանում հաշվառված N DB5D-7741-A69A հարցման՝ հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության 2016 թ. դեկտեմբերի 12-ին Արմավիրի մարզում արձանագրված հաղորդագրության համաձայն՝ Արմավիրի ՍԱՏԳ պետ Հրաչյա Ավետիսյանը կաշառք ստանալու փաստի առթիվ կալանավորվել է և մինչ օրս գտնվում է նախնական կալանքի տակ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ գործը գտնվում է մինչդատական վարույթում և դատավճիռ դեռևս չի կայացվել՝ մարզպետարանի կողմից ժամանակավորապես կասեցվել է տվյալ գործակալության պետի պաշտոնավարումը. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2016 թ. դեկտեմբերի 13-ի N 335-Ի հրամանով գործակալության պետի պարտականությունների կատարումը վերապահվել է գործակալության պետի տեղակալ Լևոն Պողոսյանին:

Իսկ կայքում համապատասխան փոփոխությունը կկատարվի, երբ տվյալ անձի մեղքը կապացուցվի դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով:

***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***

*Կատ.՝ Ա. Հովհաննիսյան*
*Հ. Վարդանյան*